# Ծուշանիկ Կուրղինյան

## Կանգնենք կողք-կողքի

Զուլում է<ր> . . . գիշեր . . . ընկեր, չե՞ս հիշեր՝
Ինչպես կուրացած, իրար մոռացած
Էն կռվում դաժան ընկանք մենք բաժան . . .
Զուլում էր, գիշե՛ր, թողինք շա՛տ լեշեր:

Քո զարկը ուժգին կպավ իմ կրծքին,
Արյունես անմիտ հազար քղամի<դ>,
Ես լացի անձայն, մարդիկ քար դարձան,
Երկիրը թնդաց, զուլումը խնդաց . . .

Զուլում է<ր> . . . գիշեր . . . հինը մի՛ հիշեր .
Կանգնենք կողք-կողքի, մի սիրտ, մի հոգի,
Միացման հույսին թիկնած միասին՝
Հարվածենք ուժգին զուլումի կրծքին . . .

1908 թ. փետրվարի